

"Ոսկի+10%" պայմաններ և սակագներ

14.11.2018թ.

1 Հնդհանուր նկարագրություն			
1.1	Վաճառք	Բանկի մասնաճյուղ	
1.2	Նպատակային նշանակություն	ՀՀ ռեզիդենտ ֆիզիկական անձանց ոսկյա իրերի գրավադրմամբ սպառողական վարկ	
2 Պրոդուկտի չափանիշներ			
2.1	Մարման եղանակ	Վարկի տոկոսները վճարվում են վարկի տրամադրման պահին, իսկ վարկի մայր գումարը՝ վարկի ժամկետի վերջում:	<ul style="list-style-type: none"> վարկի գումարի 31% վճարվում է անուիտետային մարման ժամանակացույցով մինչև նախավերջին մարումը, վարկի գումարի 69% հիմնական պարտքի մնացորդի վրա հաշվեգրված տոկոսների հետ միասին վճարվում են ժամկետի վերջում
2.2	Վարկի արժույթ	ՀՀ դրամ (AMD)	
2.3	Վարկի դիմաց վճարվող տոկոսների արժույթ	ՀՀ դրամ (AMD)	
2.4	Վարկի տրամադրման եղանակը	Կանխիկ	
3 Ոսկյա իրերի գրավադրմամբ վարկավորման պայմանները			
3.1	Անվանական տարեկան տոկոսադրույք	13.5%	10%
3.2	Վարկային հաշվի հավելյալ* սպասարկմամբ վարկի ստացման ընտրության դեպքում տոկոսադրույքից զեղչ	Տարեկան անվանական տոկոսադրույք հանած 1%	
3.3	Վարկի առավելագույն ժամկետ	180 օր	730 օր
3.4	Վարկի նվազագույն ժամկետ	80 օր	181 օր
3.5	Մեկ Վարկառուի գծով առավելագույն սահմանաչափ	3,000,000 AMD	
3.6	Վարկի նվազագույն գումար	30,000 AMD	
3.7	Վարկի վաղաժամկետ մարում	տուժանքներ նախատեսված չեն	
3.8	Վարկի տրամադրման միանվագ միջնորդավճար	Միջնորդավճար նախատեսված չէ	
3.9	Վարկային հաշվի սպասարկման ամսական միջնորդավճար (պարտադիր)	Տրամադրված վարկի գումարի 0.57%	Տրամադրված վարկի գումարի 0.53%
3.10	Վարկային հաշվի հավելյալ սպասարկման ամսական միջնորդավճար (կամավոր)	<p>Վերոնշյալ միջնորդավճարին գումարվում է նաև (կախված վարկի գումարից)՝</p> <ul style="list-style-type: none"> - մինչև 200,000 AMD (ներառյալ) վարկի դեպքում՝ տրամադրված վարկի գումարի 0.39%, - 200,001-900,000 AMD (ներառյալ) վարկի գումարի դեպքում՝ տրամադրված վարկի գումարի 0.29%, բայց ոչ ավել, քան 1,100 AMD, - 900,001-1,500,000 (ներառյալ) AMD վարկի գումարի դեպքում՝ տրամադրված վարկի գումարի 0.29%, բայց ոչ ավել, քան 1,300 AMD, - 1,500,000 AMD վարկի գումարի գերազանցման դեպքում՝ տրամադրված վարկի գումարի 0.29%, բայց ոչ ավել, քան 2,200 AMD 	
3.11	Ապահովում	Որպես գրավ ընդունվում են ոսկյա իրեր: Գրավի գնահատման ժամանակ հաշվի չի առնվում նրա գեղարվեստական արժեքը, թանկարժեք և կիսաթանկարժեք և այլ քարերը՝ այսինքն գնահատվում է բացառապես ոսկին: Եթե գարդը մի քանի մետաղների և հարգի տարասեռ համաձուլվածք է, ապա գնահատման ենթակա չէ:	
3.12	Վարկի առավելագույն հարաբերակցությունը գրավի գնահատված արժեքի նկատմամբ	110% (անկախ վարկի ժամկետից)	
3.13	Վարկի տրամադրման ժամկետ	Մինչև 1 աշխատանքային ժամ (կախված գրավադրվող ոսկու քանակից)	
3.14	Վարկային հայտով որոշման գործողության ժամկետ	20 օրացուցային օր՝ վարկային հայտով որոշում կայացնելու պահից	
4 Այլ պայմաններ			
4.1	Տույժ վարկառուի պարտավորությունների չկատարման դեպքում (յուրաքանչյուր ժամկետանց օրացուցային օրվա համար)	0,09% ժամկետանց գումարից և հաշվարկված տոկոսներից	
4.2	Վարկառուի վարկային պատմության հանդեպ պահանջներ	Բանկի համապատասխան պահանջներին բավարարող դրական վարկային պատմություն	
4.3	Լիազորագրի ձևակերպում Բանկի ներսում	3,900 ՀՀ դրամ	
4.4	Վարկային հաշվի գծով քաղվածքի/տեղեկանքի տրամադրում	"ՎՏԲ-Հայաստան Բանկ" ՓԲԸ գործող "Բանկային հաշիվների բացման և սպասարկման պայմանների և սակագների" համաձայն	
4.5	Առանց գրավի ազատման վարկը մարելու դեպքում գրավի պահպանության միջնորդավճար	Վարկը առանց գրավի ազատման մարելու դեպքում, երբ գրավը մնում է Բանկում՝ այն ձևակերպվում է որպես ի պահ ընդունված արժեք և վարկը մարելուց հետո 16-րդ աշխատանքային օրվանից սկսած հետագայում հաճախորդից գանձվում է արժեքների պահպանության միջնորդավճար՝ յուրաքանչյուր օրացուցային օրվա համար գրավի գնահատված արժեքի 0,01%-ի չափով:*	
* Վարկառուի մահվան դեպքում գրավի ստացման համար ժառանգի(ներ)ի կողմից ժառանգության վկայականը ներկայացնելու դեպքում գրավի պահպանության միջնորդավճար չի գանձվում:			
5 Գրավի գնահատում			
5.1	Գրավի արժեքի գնահատում	Ոսկյա իրերի գրավի գնահատման արժեքի մասին տեղեկատվություն ստանալու համար անհրաժեշտ է դիմել Բանկի ցանկացած մասնաճյուղ: Տարբեր հարցերի Լգ. ոսկու գնահատման արժեքը ներկայացված է Բանկի ինտերնետային կայքում http://ru.vtb.am/	

* Վարկային հաշվի հավելյալ սպասարկումը իր մեջ ներառում է հետևյալ ծառայությունները.
 - Բանկում գործող և Վարկառուին հասանելի ծառայությունների շրջանակներում Վարկառուի ֆինանսական միջոցների արդյունավետ կառավարման վերաբերյալ խորհրդատվություն.

- ֆինանսական խորհրդատվություն (ներառյալ ԱՔՌԱ հարցում),
- դժբախտ պատահարներից ապահովագրություն՝ վարկի գումարի/մնացորդի չափով՝ Վարկային հաշվի հավելյալ սպասարկման ժամանակահատվածում:

Լրացուցիչ տեղեկություն

Հաճախորդի վարկային հայտը մերժվում է, եթե՝

1. Հաճախորդի կողմից չեն ներկայացվել վարկ ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթեր:
2. Հաճախորդը չի բավարարում Բանկի նվազագույն պայմաններին:
3. Վարկավորման գործընթացի արդյունքում հայտնի է դարձել հաճախորդի վերաբերյալ այնպիսի տեղեկություն, որը կասկածի տակ է դնում հաճախորդի կողմից ներկայացված տեղեկությունը:

Վարկի տրամադրման համար անհրաժեշտ են հետևյալ փաստաթղթերը՝

1. Անձը հաստատող փաստաթուղթ
2. Հանրային ծառայությունների համարանիշ (սոցիալական քարտ) կամ փոխարինող փաստաթուղթ:

Ուշադրություն՝ Վարկի տոկոսագումարները հաշվարկվում են անվանական տոկոսադրույքի հիման վրա: Իսկ տարեկան փաստացի տոկոսադրույքը ցույց է տալիս, թե որքան կարժենա վարկը ձեզ համար տոկոսագումարները և այլ վճարները սահմանված ժամկետներում և չափերով կատարելու դեպքում: Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման կարգը կարող եք գտնել այստեղ:

Զգուշացում՝ Պարտավորությունների չկատարման դեպքում գրավը պարտավորությունները ծածկելու համար բավարար չլինելու դեպքում պարտավորությունը կարող է մարվել վարկատուի այլ գույքի հաշվին:

Զգուշացում՝ Ձեր գույքը (տունը, մեքենան կամ այլ) կարող է առգրավվել, եթե դուք ժամանակին չկատարեք ձեր տոկոսագումարների եվ վարկի գումարի մարումները:

Զգուշացում՝ Ձեր կողմից տոկոսագումարների և վարկի գումարի մարումները ժամանակին չվճարելու դեպքում ձեր մասին տեղեկատվությունը կգրանցվի վարկային ռեգիստրում:

Ուշադրություն՝ Հարգելի հաճախորդ՝ Վարկային հայտի վերաբերյալ դրական որոշում կայացնելուց հետո նախքան վարկային պայմանագրի կնքումը Բանկը Ձեզ տրամադրում է Անհատական թերթիկ՝ համաձայն ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից հաստատված «Բանկի և ավանդատուի, կրեդիտավորողի և սպառողի հաղորդակցման կարգը, պայմանները, ձևերը և նվազագույն պահանջները» կանոնակարգ 8/05-ի: